ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

23 նոյեմբերի 2020թ.

Քաջաան

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

2020 թվականի նոյեմբերի 23-ին ժ. 15 ^{00}-ին կայացած

ՀՀ Տավուշի մարզխորհրդի նիստի

1. ՀՀ Տավուշի մարզի համայնքների սեփական եկամուտների կատարողականների մասին:

Զեկուցող՝ Ա.Բաբլումյան - ՀՀ Տավուշի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի պարտականությունները կատարող

2. ՀՀ Տավուշի մարզի 2020թ. գյուղատնտեսական մթերքների արտադրության և մթերման արդյունքները:

Զեկուցող՝ Վ.Սուքոյան – ՀՀ Տավուշի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ

3. Տավուշի մարզի դպրոցներում կրթական գործընթացի կազմակերպման հիմնական հարցերը:

Զեկուցող՝ Մ.Հարությունյան - ՀՀ Տավուշի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ

4. Արցախի Հանրապետությունից տեղահանված և Տավուշի մարզի համայնքներում բնակություն հաստատած բնակիչներին անհրաժեշտ պայմաններով ապահովման գործընթացի մասին:

Զեկուցող՝ Գ.Հարությունյան – ՀՀ Տավուշի մարզպետարանի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի վարիչ

5. Այլ հարցեր

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 2

ՀՀ Տավուշի մարզխորհրդի նիստի

Նիստը վարում էր ՀՀ Տավուշի մարզպետ Հ.Զոբանյանը:

Ներկա էին մարզպետի տեղակալը, գլխավոր քարտուղարը և նրա տեղակալը, վարչությունների պետերը, բաժինների վարիչները, պատասխանատու մասնագետները, մարզխորհրդի անդամները:

Մարզխորհրդի 24 անդամներից ներկա էին 23-ը:

Ողջույնի խոսքով նիստը բացեց մարզպետ Հ.Զոբանյանը: Նա անդրադարձավ արցախա-ադրբեջանական պատերազմին, նշելով, որ անհրաժեշ է մեր կյանքում, միջավայրում, բոլոր օղակներում արմատական, էական փոփոխություններ իրականացնել: Դրանց մեծ մասը վաղուց բացահայտված է, սակայն չենք ունեցել բավարար համարձակություն, կամք, լրջություն, ուժ, համախմբվածություն, հետևողականություն, ազնվություն, սկզբունքայնություն: Կամ մենք պետք է պարտադրենք այս արժեհամակարգն ամեն օր, կամ ցանկացած մեծ ջանք, նույնիսկ հաջողություն մնայուն չի լինելու: Մարզպետը նշեց, որ հայտարարում ենք դպրոցի զարգացմանը, հզորացմանը ամեն գնով հասնելու մեր պատրաստակամության մասին: Մարզային, համայնքային յուրաքանչյուր կազմակերպություն, աշխատակից, յուրաքանչյուր ընտանիք և յուրաքանչյուր ոք պետք է լծվի այս աշխատանքին: Հայաստանը կառուցելու, հզորացնելու, արժանապատիվ կյանք ու հայրենիք ունենալու համար մեզ պետք են մտածող, ստեղծարար մարդիկ, ճարտարապետներ, շինարարներ, ինժեներներ, քիմիկոսներ, մաթեմատիկումներ, ֆիզիկոսներ ու ծրագրավորողներ: Պետք է բացառվեն ձևականությունները, իմիտացիամները, ժամանակի կորուստը: Սա ենթադրում է դպրոցի վերափոխում ու վերածնունդ: Դպրոցում պետք է կատարվեն իրական փոփոխություններ՝ բոլորիս մասնակցությամբ: Անդրադառնալով տնտեսությանը,մարզպետը նշեց, որ տնտեսությունը մեր երկրի սիրտն է: Բոլորիս գործողությունները, ծրագրերը, նպատակները, որոշումները, ջանքերը պետք է ուղղված լինեն տնտեսական զարգացմանը և առաջընթացին: Ամենամեծ նպատակը արժեք ստեղծելն է, արտադրելը, և բոլորիս պարտականությունն է դրան նպաստելը: Պարտավոր ենք տնտեսական խթանման ուժային ծրագրեր իրականացնել, որոնց արդյունքը պետք է լինի արտադրանքի ծավալների կտրուկ մեծացումը: Յուրաքանչյուր օր պետք է ավելի ուժեղ, կայուն, աշխատունակ, ժամանակակից անվտանգային համակարգ ունենանք: Պետք է անընդհատ մեծացնենք մեր անվտանգության որակի եւ մակարդակի զարգացման ոչ միայն տեմպերը, այլև դրանց ուղղված ջանքերը, միջոցները, գործիքները, յուրաքանչյուրիս մասնակցությունը: Շատ արագ պետք է ավարտենք աշխարհազորի լիակատար ձեւավորումը Տավուշի մարզում: Մեր կյանքի ու երկրի զարգացման գործում հանրային մասնակցությունը պետք է մշտական գործող հարթակ լինի՝ կանոնավոր, արդյունավետ և համընդհանուր:

1. ՀՀ Տավուշի մարզի համայնքների սեփական եկամուտների կատարողականների մասին

/Զեկուցող՝ Ա.Բաբլումյան - ՀՀ Տավուշի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի ժ/պ/

Զեկուցողը ներկայացրեց, որ մարզի 24 համայնքների 2020 թ. տեղական բյուջեների տարեկան նախատեսված եկամուտների հանրագումարը 2020 թվականի նոյեմբերի 23-ի դրությամբ կազմում է 5 մլրդ 39 մլն 680.9 հազ դրամ, որից սեփական եկամուտները՝ 1 մլրդ 255 մլն 803,6 հազ դրամ, որը կազմում է ընդհանուր գումարի 24,9 %-ը, ՀՀ պետական բյուջեից տրամադրվող պաշտոնական դրամաշնորհները կազմում են 3 մլրդ 783 մլն 877.3 հազ դրամ (75.1 %), այդ թվում դոտացիան՝ 2 մլրդ 991 մլն 465.7 հազ դրամ (59,4 %), այլ տրանսֆերտներ՝ 792 մլն 411.6 հազ դրամ (15,7 %):

2020 թվականի նոյեմբերի 23-ի դրությամբ մարզի համայնքների եկամուտների փաստացի մուտքը կազմել է 3 մլրդ 994 մլն 775.9 հազ դրամ, որը կազմում է տարեկան նախատեսվածի 79,3 %-ը, իսկ սեփական եկամուտների հավաքագրումը կազմել է 767 մլն 475 հազ դրամ կամ կատարվել է տարեկան նախատեսվածի 61,1 %-ը:

2020 թվականի նոյեմբերի 23-ի դրությամբ մարզի համայնքների սեփական եկամուտները 2019 թ. նույն ժամանակահատվածի համեմատությամբ պակաս են հավաքագրվել 204 մլն 843.4 հազ դրամով, այդ թվում գույքահարկի գծով՝ 38.9 մլն դրամ, հողի հարկի գծով՝ 24.9 մլն դրամ, տեղական տուրքեր՝ 8.9 մլն դրամ, տեղական վճարներ՝ 121.4 մլն դրամ, պետական տուրքեր՝ 5.0 մլն դրամ, գույքի վարձակալությունից եկամուտներ՝ 11.8 մլն դրամ:

Սեփական եկամուտների թերհավաքագրման հիմնական պատճառներից մեկը նոր կորոնավիրուսի տարածման կանխարգելմանն ուղղված միջոցառումների իրականացումից հետո ստեղծված իրավիճակն է (որի հետևանքով փակվեցին համայնքային նշանակության կազմակերպություններ /մանկապարտեզներ, մշակույթի տներ, երաժշտական և արվեստի դպրոցներ, մարզադպրոցներ/), և հուլիս ու սեպտեմբեր ամիսներին Ադրբեջանի կողմից սանձազերծած պատերազմը:

Համայնքների ղեկավարներին առաջարկվում է վերանայել տեղական բյուջեները և այն եկամտատեսակների մասով, որոնց կտրվածքով եկամուտները չեն հավաքագրվել վերը նշված միջոցառումների իրականացման հետևանքով, կատարել համապատասխան փոփոխություններ տեղական բյուջեների եկամտային և ծախսային մասերում և ներկայացնել ավագանիների քննարկմանը:

Ըստ առանձին եկամտատեսակների սեփական եկամուտների կատարողականները ս/թ նոյեմբերի 23-ի դրությամբ հետևյալն է.

- Հողի հարկ - 2020 թ. տարեկան նախատեսվել է 204.7 մլն դրամ, հավաքագրվել է 137.8 մլն դրամ, կամ կատարվել է 67,3 %-ով:

Հողի հարկի մասով ամենացածր կատարողականներ ունեն հետևյալ համայնքները՝ Խաչթառակ 32.5 %, Աչաջուր 33.7 %, Գանձաքար 33.8%, Բերքաբեր 34.7 %, Գետահովիտ 37.8 %, Լուսահովիտ 38.6 %:

- Գույքահարկ - հավաքագրվել է 310.2 մլն դրամ կամ կատարվել է տարեկան նախատեսվածի 61 %-ը:

Ամենացածր կատարողականներ ունեն հետևյալ համայնքները՝ Վազաշեն 5,2 %, Բերքաբեր 25,2 %, Խաշթառակ 30,5 %, Ն. Ծաղկավան 34,1 %, Այգեհովիտ 39.4 %, Կողբ 39,9 %:

- Տեղական տուրքեր – հավաքագրվել է 27.8 մլն դրամ կամ կատարվել է տարեկան նախատեսվածի 60,6 %-ը:

Ամենացածր կատարողականներ ունեն հետևյալ համայնքները՝ Լուսաձոր 3,3 %, Աչաջուր 10,8 %, Գանձաքար 34 %, Այրում 35,2 %, Վազաշեն, Այգեհովիտ համայնքները գումարներ չեն հավաքագրել:

- Գույքի վարձակալությունից եկամուտներ – հավաքագրվել է 78.1 մլն դրամ կամ տարեկան նախատեսվածի նկատմամբ կատարվել է 63,8 %-ով:

Ամենացածր կատարողականներ ունեն հետևյալ համայնքները՝ Բերքաբեր 22,9 %, Աչաջուր 27,6 %, Կողբ 34,9 %, Իջևան 40,7 %, Այրում 53%:

- Տեղական վճարներ – հավաքագրվել է 152.5 մլն դրամ կամ կատարվել է տարեկան նախատեսվածի նկատմամբ 49,4 %:

Ամենացածր կատարողականներ ունեն հետևյալ համայնքները՝ Խաշթառակ 8 %, Այգեհովիտ 8.7 %, Սևքար 14.2 %, Գանձաքար 19.5 %, Գետահովիտ 26.1 %, Դիտավան համայնքը գումարներ չեն հավաքագրել:

Տարեվերջին մնացել է մեկ ամսից քիչ ավելի ժամանակ և համայնքների ղեկավարներին առաջարկվում է հետևողական աշխատանքներ տանել տեղական բյուջեներով նախատեսված սեփական եկամուտները հավաքագրելու ուղղությամբ, ինչպես նաև վերանայեն ծախսային ուղղությունները աշխատավարձի գծով պարտքեր չառաջացնելու նպատակով: Որովհետև ինչպես արդեն նշվեց, եկամուտների թերակատարման դեպքում չեն կատարվելու նաև ծախսային մասով նախատեսված ծախսերը, իսկ աշխատավարձերի գծով պարտքերից խուսափելու համար անհրաժեշտ է վերանայել ծախսային բոլոր հոդվածները:

Միաժամանակ չպետք է մոռանալ նաև 2021 թվականի տեղական բյուջեների մասին և համայնքների ղեկավարներին առաջարկվում է սահմանված ժամկետներում տեղական բյուջեների նախագծերը ներկայացնել ավագանիների քննարկմանը և հաստատումից հետո այն ներկայացնել մարզպետարան (դոտացիաների նախնական գումարների չափերը հրապարակվել են ՀՀ ֆինանսների նախարարության կայքէջում, գրությամբ այն տրամադրել ենք համայնքներին):

Ավարտելով իր զեկույցը, Ա.Բաբլումյանը նշեց, որ ՀՀ Տավուշի մարզպետարանը պատրաստ է մարզի համայնքներին ցուցաբերել մեթոդական և խորհրդատվական օգնություն ինչպես եկամուտների հավաքագրման, այնպես էլ տեղական բյուջեների նախագծերի կազմման գործընթացներում:

<u>Առաջարկվեց.</u>

Համայնքների ղեկավարներին.

- Միջոցներ ձեռնարկել 2020 թվականի տեղական բյուջեներով նախատեսված սեփական եկամուտներն ամբողջությամբ հավաքագրելու ուղղությամբ:
- Վերանայել ծախսային ուղղությունները՝ աշխատավարձի գծով պարտքեր չառաջացնելու նպատակով:
- Սահմանված ժամկետում ավագանու քննարկմանը ներկայացնել 2021 թվականի համար նախատեսված տեղական բյուջեների նախագծերը և հաստատվելուց հետո այն ներկայացնել մարզպետարան:

2. ՀՀ Տավուշի մարզի 2020թ. գյուղատնտեսական մթերքների արտադրության և մթերման արդյունքները

/Զեկուցող՝ Վ.Սուքոյան – ՀՀ Տավուշի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ/

Զեկուցողը ներկայացրեց, որ մարզի համայնքներում հիմնականում ավարտվել են բերքահավաքի աշխատանքները:

Համաձայն համայնքապետարաններից վիճակագրական գործակալություն ներկայացրած տվյալների 01.11.2020թ. դրությամբ մարզի համայնքներում արտադրվել է.

Հացահատիկ և հատիկաընդեղեն – 5822 տոննա /2019թ. նոյեմբերի 1-ի դրությամբ՝ 6816 տոննա/, բանջարեղեն – 4802 տոննա /4021 տոննա/, բոստան – 557 տոննա /427տոննա/, կարտոֆիլ – 5526 տոննա /5004 տոննա/, պտուղ – 9720 տոննա /7573տոննա/, խաղող – 12454 տոննա /11199 տոննա/, ծխախոտ – 220տոննա /302 տոննա/, արևածաղիկ – 6 տոննա /15 տոննա/, խոտ – 25023 տոննա /31108 տոննա/, ծղոտ – 1124 տոննա /1393 տոննա/: 3443 հա աշնանացանից ըստ նախնական տվյալների, հնձվել է 582 հա գարի /միջին բերքատվությունը 8,2 գ/հա/, 2 173 հա ցորեն /միջին բերքատվությունը 11,6 գ/հա/, հնձվել է նաև 15,4 հա գարնանացան ցորեն և գարի /միջին բերքատվությունը 7,5-8,0 գ/հա/: Անբավարար բերքատվության պատճառով չի հնձվել շուրջ 600 հա արտ /269 հա-ը հնձվել է որպես անասնակեր/, իսկ սահմանամերձ բնակավայրերում վտանգավոր իրավիճակից ելնելով չի հնձվել շուրջ 37 հա:

Մթերող կազմակերպությունների հետ արդյունավետ համագործակցության շնորհիվ խաղողի բերքահավաքը կատարվեց ժամանակին և անկորուստ: 1կգ-ը 140-155 դրամով մթերվեց 9359 տոննա խաղող՝ 2019թ. 6869 տոննայի դիմաց: Այդ թվում.

<<Երևանի կոնյակի գործարան>> ՓԲԸ Բերդի մասնաճյուղ – 5433 տոննա / 2019թ.՝4231 տոննա/,

<<Երևանի շամպայն գինիների գործարան>> ԲԲԸ Դեբեդավանի գինու գործարան – 1800 տոննա / 2019թ.՝ 1404 տոննա/,

<<Իջևանի գինու և կոնյակի գործարան>> ԲԲԸ – 1860,5 տոննա/ 2019թ՝ 1022 տոննա/,

<<Բերդավանի գինու գործարան>> ԲԲԸ – 40 տոննա/ 2019թ՝ 62 տոննա/,

<<Էկոգարդեն>> ՍՊԸ - 225 տոննա / 2019թ՝ 150 տոննա/:

Մարզի վերամշակող կազմակերպությունների կողմից 23.11.2020թ.դրությամբ մթերվել է 558 տոննա պտուղ և հատապտուղ ու բանջարեղեն /2019թ. 773 տոննա/, մթերումներն ընթացքի մեջ են:

Օպերատիվ տվյալների համաձայն շուրջ 1550 տոննա դեղձ, թուզ, հոն, ելակ է արտահանվել արտերկիր /2019թ. 900 տոննա/:

Համայնքներից ստացված նախնական տեղեկատվությունների համաձայն 2020թ. նախատեսվում էր կատարել 3830 հա աշնանացան: Օպերատիվ տվյաներով կատարվել է շուրջ 1600 հա աշնան վար, 1550 հա աշնանացան:

ՄԱԿ-ի պարենի համաշխարհային ծրագրի շրջանակներում ,,Ամբողջահատիկ ցորենի արժեշղթայի ծրագրով մարզ է ներկրվել Կրասնոդար-99 և Վասա սորտերի 35,4 տոննա սուպերէլիտա և էլիտա սերմացու և կատարվել է 120 հա աշնանացան, այդ թվում.

Սարիգյուղ – 38,7 հա, Ն.Ծաղկավան – 5,6 հա, Վ.Կ.Աղբյուր – 35,7 հա, Նորաշեն – 30 հա, Կոթի – 10 հա:

3. Տավուշի մարզի դպրոցներում կրթական գործընթացի կազմակերպման հիմնական հարցերը

/Զեկ.՝ Մ.Հարությունյան – ՀՀ Տավուշի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ/

Զեկուցողը ներկայացրեց, որ Տավուշի մարզի սահմանամերձ բնակավայրերի թվով 44 հանրակրթական դպրոցներում ուսուցումը կազմակերպվում է հեռավար ձևով: Հեռավար են գործում նաև ներհամայնքային տրանսպորտ ունեցող Դիլիջան համայնքի երկու դպրոցների /Դիլիջանի թիվ 2 հիմնական և Հաղարծինի միջնակարգ դպրոցների/ 5-12-րդ դասարանները՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2020 թվականի մայիսի 20-ի թիվ 09-Ն հրամանի համաձայն: ՀՀ ԿԳՄՍՆ ներկայացրել է այն բոլոր հարթակները, որոնցով հնարավոր է կազմակերպել հեռավար դասընթացները:

Հեռավար ուսուցումն առավել օպտիմալ կազակերպելու նպատակով վերոնշյալ դպրոցներին տրամադրվել է ընդհանուր թվով 93 պլանշետ, 50՝ նեթբուք: Բացի այդ՝ ԿՏԱԿ-ի և բջջային օպերատորների միջև համապատասխան պայմանագրերի կնքումից հետո դպրոցներին բաշխելու համար տրամադրվել է բիլայնի 2780 շարժական և 400 ֆիքսված կապ: Հեռահաղորդակցության ոլորտի օպերատորների հետ համաձայնեցվել է կրթական մատչելի սակագին՝ հիմնական հարթակների անսահմանափակ օգտագործմամբ: Պատերազմական դրությամբ պայմանավորված Արցախից Տավուշի մարզ տեղափոխված աշակերտների ընդհանուր թիվը 187 է, որից դպրոց է հաճախում 92 -ը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սկսվել է վերադարձը դեպի Արցախ՝ Տավուշի մարզի դպրոցներում ընդգրկված աշակերտների թիվն առայժմ փոփոխվում է: Պատերազմական իրավիճակում հոգետրավմա ապրող երեխաներին աջակցություն ցուցաբերելու նպատակով ԵՊՀ Անձի հոգեբանության ամբիոնը, Մանկական և կրթության հոգեբանների ասոցիացիան, ՀՀ ԿԳՍՄՆ և Հանրապետական մանկավարաժահոգեբական կենտրոնի հետ համատեղ ս/թ նոյեմբերից ուսուցիչների համար իրականացնում են վերապատրաստման դասընթաց՝ «Պատերազմական իրավիճակում հոգետրավմա ապրող երեխաներին մանկավարժական աջակցության ցուցաբերման ձևերը» թեմայով:

Պատերազմական դրությամբ պայմանավորված՝ ռազմական գործողությունների մեկնած ուսուցիչների ընդհանուր թիվը 42 է: Ռազմական գործողությունների մեկնած ուսուցիչների ամենամեծ թիվը Այգեհովիտի, Արծվաբերդի միջնակարգ և Կիրանցի հիմնական դպրոցներում է /ընդհանուր թիվը՝ 11 ուսուցիչ /մեկ ուսուցիչ առողջական խնդիրների պատճառով վերադարձել է դպրոց/: Ռազմական գործողությունների մեկնած ուսուցիչների դասաժամերը ժամանակավորապես տրամադրվել են փոխարինող ուսուցիչների:

Դպրոցներում դասապրոցեսի կազմակերպման գործընթացը գտնվում է մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության ուշադրության կենտրոնում, ինչպես նաև իրականացվում է առցանց կրթության կազմակերպման և արդյունքների մշտական մոնիթորինգ:

Կորոնավիրուսային համաճարակով պայմանավորված դպրոցներին տրամադրվել են դիմակներ և ախտահանիչ նյութեր:

Զեկույցն ընդունվեց ի գիտություն:

4. Արցախի Հանրապետությունից տեղահանված և Տավուշի մարզի համայնքներում բնակություն հաստատած բնակիչներին անհրաժեշտ պայմաններով ապահովման գործընթացի մասին

/Զեկուցող՝ Գ.Հարությունյան – ՀՀ Տավուշի մարզպետարանի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի վարիչ/

Զեկուցողը ներկայացրեց, որ 2020թ. սեպտեմբերի 27-ին թուրք-ադրբեջանական ագրեսիայով պայմանավորված, ինչպես հանրապետության մյուս մարզերը, այնպես էլ Տավուշի մարզը ևս սկսեց ընդունել Արցախից տեղահանված մեր հայրենակիցներին:

Տեղահանվածների թիվը աճում էր երկրաչափական պրոգրեսիայով, առաջին օրերին ընդգրկելով հիմնականում Դիլիջանի տարածաշրջանի հյուրանոցային համալիրները և հյուրատները, իսկ ավելի ուշ մարզի մյուս տարածաշրջանների հյուրանոցային և հյուրատնային համալիրներն ու անհատական բնակելի տները, որտեղ ընդհանուր առմամբ տեղակայվեցին մոտ 2000 արցախցիներ:

ՀՀ Տավուշի մարզպետի համապատասխան որոշմամբ ստեղծվեց աշխատանքային խումբ, որը շատ արագ ընդգրկվեց արցախցի ընտանիքների բնակեցման, կարիքների գնահատման և առաջին անհրաժեշտության պարենային և ոչ պարենային ապրանքների ձեռքբերման և մատակարարման գործընթացներում:

Նշված աշխատանքները կազմակերպվել և իրականացվել են մարզպետարանի և համայնքապետարանների պատասխանատուների, ինչպես նաև տեղական և միջազգային կազմակերպությունների և կամավորների կողմից:

Հատկանշական է միջազգային և հայկական Կարմիր խաչի ցուցաբերած աջակցությունները, Սոչիի, Պյատիգորսկի և Կրասնոդարի Հայ համայնքների կողմից ցուցաբերված աջակցությունները: Մեծածավալ աջակցություններ է սկսել ցուցաբերել ''Ֆօկս օն չիլդրեն'' բարեգործական կազմակերպությունը: Տեղահանված արցախցիներին աջակցություններ են ցուցաբերում նաև Հայ Առաքելական եկեղեցու Տավուշի թեմը, Վորդ Վիժն Հայաստան կազմակերպությունը, ինչպես նաև այլ անհատ բարերարներ:

Ներկայումս մեծ քանակի տաք հագուստ և անկողնային պարագաներ են պահեստավորված Դիլիջանի և Իջևանի պահեստներում, որոնց առաքումն ապահովելու համար ակնկալում ենք համայնքների պատասխանատուների ակտիվ գործունեությունը:

Հարկ եմ համարում նշել, որ առ այսօր նախատեսված պետական միջոցներից օգտագործվել է մոտ 1.2 մլն.դրամ:

Վերջին օրերին սկսվել է արցախցիների հետ վերադարձի գործընթացը: Այսօրվա դրությամբ մարզում առկա է 1543 արցախցի:

Զեկույցն ընդունվեց ի գիտություն:

ՀՀ Տավուշի մարզպետ **Հ.ՉՈԲԱՆՅԱՆ**

09.12.2020

X

Արձանագրեց՝ Տ.Անտոնյանը